ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ: gnumner.kanach@yerevan.am

«07» հունվարի 2025թ.

ՀՀ/Ելից 72/ 01-25

«Վարդան Այվազյան» ԱՁ-ին

(ՀՀ, Երևան, Հր. Աճառյան 2 նրբ. 4

էլ. հասցե՝ (vardan8887@mail.ru)

Ծանուցում

պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

2024 թվականի մարտի 18-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Վարդան Այվազյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-24/13-3 (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով»:

«Վարդան Այվազյան» ԱՁ-ին 2024 թվականի օգոստոսի 09-ին ծանուցվել է, որպեսզի ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-24/13-3 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ՀՈԱԿ մատակարարի թվով 3500 հատ կարմիր, կապույտ, սպիտակ գույնի ծխածաղիկներ, սակայն մատակարարում չի իրականացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը միակողմանի (մասնակի) լուծում է Պայմանագիրը նշված

չափաբաժինների մասով՝ համարելով այն լուծված ընդհանուր **623245(վեց հարյուր քսաներեք հազար երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ** գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆ

Կատարող՝ Ն. Շահրազյան
Հեռ.՝ 011-514-745